№ 5 ԹԻՖԼԻՍ ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼ 27

1897

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼ 27 № 5

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ռուբ. կէս տարեանը 6 ռուբ: Առանձին համարները 5 շահի:

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուայ 5 ֆր. կամ 2 ռուբլի:

Արտասահմանից փոխ համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Эмзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 30 ՀԱՄԱՐ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

«Շ Ղ.» խմբ. գրութիւնը բաց է 10-ից մինչև ժամը. բ ! կիրակի և տօն օրերի:

Յայտարարու թիւնները ընդունվում են ամեն եզով իւրաք չիւր բառին մի անգամուայ համար 1 շահի: Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ:

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Մայիսի 5-ից սկսած, կթարգմանենք և առանձին թերթիկներով կը հրատարակենք հեռագիրները. ցանկացողները կարող են դիմել Շաւիղի խմբագրութեանը:

Ամսական բաժանորդագինն է 5 ղրան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զուլան և Հնդկաստան. Դարձեալ կղերը. Լուսնահաչ. Նամակ Փարուխին. Նամակ Մարզվարից. ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ.—ԵՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հեռագիրներ. Բանասիրական նամակ խմբագրութեան ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՋՈՒՂԱՆ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ

—

Անհերքելի իրողութիւն է, որ Զուղայեցին, այսօր ինքնամոռացութեան մէջ է և այդ ինքնամոռացութեանը, պատճառ է դարձել Հնդկաստանը:

Հնդկաստանը—Զուղայեցիների կրթական բարձր աթոռը, ինչպէս երևում է, փոխարէն կրթելու ու, մի խօսքով, մարդ դարձնելու Զուղայեցուն, ընդ հակառակը, մարդկութեան շնորհքից բոլորովին զրկում է նրան: Թէ ինչպէս, այդ մասին վերջը կամ ուրիշ ժամանակ կխօսենք:

Բայց հիմա գանք ու մի բան հարցնենք Հնդկաստանում կրթուած Զուղայեցուց, տեսնենք ինչ կասէ:

Ինչ ես, մարդ ես:

Այո՛, ես մարդ եմ, սարդ դու ես, կը պատասխանէ նա,—ես, աւելացնում է նա, —ես տասը տարի Հնդկաստանում չարչարուել եմ, ուսում եմ առել, ինգլիզերէն եմ սովորել, հայերէն էլ չեմ կարող խօսել, սովորել եմ սիրուն շորեր հագնել, նաշխուն վիզկապ կապել, ճռճռան կօշիկներ հագնել, ձեռնափէտ ձեռ առնել, ինգլիզի զտակ դնել, դանակ չանգալով հաց ուտել, քաթա փլաւ ուտել, բիր ու բրանդ խմել, սարդին մազայ անել, սրանք ամենը սովորել եմ, էլը դու կարծում ես որ ես մարդ չեմ, բաս ինչ եմ:

Ահա, ընթերցողներ, սրանք են սովորել Հնդկաստանում կրթուած մեր Զուղայեցի ուսումնականները. էլ ինչ էք ուզում սովորեն:

Զուղայեցին, (անշուշտ բացառութիւններով հանդերձ) այսօր, Հնդկաստանում կրթուելուց յետոյ, վերադառնում է Զուղա իրեն վրայ այն համարումն ունենալով, թէ ինքը կատարելագործուած մի անձնաւորութիւն է. սակայն, եթէ լաւ քննես նրան, կտեսնես որ նա այդ իր պաշտած և իրեն պարծանք անգլիերէն լեզուի մէջ իսկ, նա դեռ շատ մանուկ է: Մի բան, որի մէջ նա շատ հմուտ ու ճարպիկ է, այդ ինգլիզի զտակ դնելն ու ինգլիզի լեզուով բարևելն է:

Քիչ ու շատից նա թերևս լսած է Շէքսպիրի, Միլտոնի, Տէնիսընի և այլն անունները. բայց նա իմանում է թէ ովքեր էին Խորէն, Եղիշէն, Մեսրովբն և այլն *). ոչ նա բոլորովին անծանօթ է նրանց:

Հայութիւնը, հայ լեզուն, հայ հեղինակները, հայի անցեալը, ներկան ու ապագան չեն հետաքրքրում նրան: Նա կարծում է որ, եթէ հայ կայ, այդ Զուղայեցիներն ու Հնդկահայերն են. եթէ լեզու կայ, այդ ինգլիզերենն է. եթէ մարդ կայ, այդ ինգլիզերեն փռթողն է, էլ մարդ չկայ:

Նա գուցէ գիտէ թէ ով էր Նելսընը, բայց նա թերևս երբէք չգիտէ թէ ով էր քաջն Վարդան: Այդ անմահ անունը, գուցէ դեռ նրա խուլ ականջներին չէ հասել:

Զուղայում, բողոքականաց կամ ազգային դպրոցում կրթուած երիտասարդները, շատ աւելի բարձր դիրք են բռնում քան նրանք: Առաջինները, մի խօսքով, շատ աւելի կրթուած, շնորհքով, վարքով ու բարքով են քան յետինները. նրանք գոնէ այսօր հասկանում են, թէ ինչ է իրենց դիրք ու վիճակը, թէ ինչ է ինքնաճանաչութիւնը. նրանց երակների մէջ կայ քիչ արիւն, բայց Հնդկաստանում կրթուած (?!) տարաբաղդ երիտասարդները, այնտեղից վերադառնալուց, նմանում են դիակացած մարմինների:

Շատոնք, ինչ և իցէ, կարծում են թէ, Հնդկաստանը մեծ օգուտներ է հասցնում Զուղայեցուն: Այո՛, օգուտները ի մէջի այլոց, նրանք են որը վերը նկարագրեցինք. բացի դրանցից, գլխաւոր նպաստը, որ Հնդկաստանից գալիս է, այդ այնտեղից ամեն ամիս գացող cheque-եր (փոխանակագրերն) են, որոնցով Զուղայի ստւար մասը ապրում է: Այդ cheque-երը, իրենց հերթում, անասելի վնասներ են տալիս Զուղայեցուն:

Ընթերցող, մտիր Զուղա, անցիր փողոցներով, կը տեսնես որ ամեն թաղի փողոցի գլուխներում, 10, 20, 30, 40, հոգի անգործ ու անբան մարդիկ, արևի տակին նստած տաք զրոյցով զբաղուած են. բայց ինչ է նրանց խօսակցութիւնը, ա՛յ ասեմ, զրպարտութիւն ամեն անցնողի ետևից: Թէկուզ անցնողը լինի սուրբ ու անարատ, դարձեալ, նրանք մի բան կը ճարեն խօսելու նրա ետևից: Եւ որո՞նք են այդ մարդիկները, ա՛յ ասեմ, հէնց վերն ասածս cheque ուտողները: Ահա Հնդկաստանի cheque-ի օգուտը: Այդ փողերի յոյսով, շատերը, մեռելային կեանք են վարում Զուղայում, ոչ գործ ունեն և ոչ մտածողութիւն. նրանց միակ հոգն այն է թէ երբ փոստը կը գայ որ իրենց համար cheque բերի, և նրանց գործը միայն այն է, որ cheque ստանալու պէս շուտ վազեն քաղաք փող ստանալու:

Ահա, այս է chequeով ապրողների կեանքը: Մնում է արհեստաւոր և վաճառական դասակարգը. է՛հ նրանք վատ չեն, խեղճերը գոնեայ զգում են թէ կեանք ինչ է:

Անփոփելով, մենք մի քանի խրատներ կտանք Զուղայեցիներին:

Այլ բաւական է, Զուղայեցիներ, աշխարհս տակն ու վրայ եղաւ, դուք քնած էք, դեռ անզգայ էք. մի քիչ էլ դուք շարժէք, մի քիչ էլ դուք մտածէք, նպաստել է գործին, այդ մենք չենք ուրացել և չենք ուրանում, բայց խոստովանեցէք դուք էլ որ նրանց միջոցով միայն որոնց այսօր մատնիչ, դաւաճան, հայլն հայլն է անուանում... մի անգամ էլ գոռ տուր դդում գլխիդ և կարդայ կրկին, երրորդ չորրորդ... մի քանի տասնեակ անգամ Շաւիղի № 35-ում Զիրօղլի ստորագրութիւն կրող նամակը, գուցէ այս անգամ կարողանաս հասկանալ նրա միտքը:

Դուք ասում էք, որ ես պաշտպանում եմ մի խումբ սրիկաների, որոնք ընդհանուր ժողովի վճռով արտաքսուած են իբրև դաւաճաններ, մատնիչներ հայլն, և որոնց այդ ածականների տէր լինելը հրապարակով հաստատել է անգլիական արդարադատ (իրա՛ւ) դատարանը հայլն... նախ, բացարձակ կերպով յայտարարում ենք, որ ես ձեր ակնարկած անձերին պաշտպանել եմ և պիտի պաշտպանեմ, ոչ թէ իբրև հնչակեան, չը չփոթուէք, և ոչ մի կողմի յարող (որովհետև մինչև օրս պաշտօնական

*) Երևի խեղճ յօդուածագիրը բացի դրանցից ուրիշ հեղինակներ և գործիչներ չի ճանաչում: Նաղարեան, Նալբանդեան, Աբովեան, Դրիգոր Արծրունի, Բոֆֆի, Գամար Քաթիպա հայլն Զուղայեցիների և հնդկաստանցիներին երբէք ծանօթ չեն: Ծն. Խմբ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մարաղայ 11 ապրիլ 97

Մենք մեր ապրիլ 4 թուակիր նամակով յայտնել էինք, որ պ. Ցակ. Ղաղարեանը իր ժեզուիտական ամենասուր միջոցներով ապացուցեց որ ոչ մի փաստ չունի իրեն վրայ արուած ամբաստանութիւնների համար և հետևապէս ինքն իր այդ ստոր ընթացքով փակած լինելով միանգամայն իրեն վերաբերեալ խնդիրը, այլ ևս աւելորդ ենք համարում կրկին անգամ բանակուի դուրս գալ այդ վարձկան արարածների հետ: Բայց մեր այդ նամակը ուղարկելուց յետոյ, երբ ստացանք Շաւիղի № 39-ը և որի մէջ տպագրուած տեսանք Ցակ. Ղաղարեանի երկու լկտի ու իրեն միայն յատուկ հայհոյանքներով ու զրպարտութիւններով օծուած, զարդարուած նամակները (իբր թէ պատասխան իմ գրուածին ?!!), ստիպուեցանք կրկին անգամ ասպարէզ դուրս գալ և պարոնի ինձ ուղղած ոճերը. դարձուածները յետ դարձնել իրեն, այս անգամ աւելի զօրաւոր փաստերով) որպէս զի երկրորդ անգամին այդ հայհոյանքների ու ստերի տոպրակ պարոնը չը համարձակի իր թունալի, կեղտոտ գրչով մրոտել Շաւիղի էջերը:

Ուստի կը խնդրեմ Շաւիղի խմբագրութիւնից, որ ջատագով լինելով արդարութեան ու ճշմարտութեան վսեմ գաղափարին, նոյնութեամբ, առանց ոև է փոփոխութեան ենթարկելու տպագրէ սոյն նամակս, որի ամբողջ պատասխանատուութիւնը ես ինձ վրայ եմ առնում:

Պրն. Ղաղարեան, ձեր «քօթօթական» յօդուածին, որին սրախօսութեան ձև էք տուել, պատասխանելու կարիք չեմ զգում, աւելորդ եմ համարում և նրա ներքևը դրած ծանօթութեան պատասխանելու, որովհետև այդ երկուսի մէջ դուք ցոյց էք տուել միանգամայն ձեր բարոյական սնանկութիւնը..... պարոն, դուք այն աստիճան ողորմելի և օրսկուրանդներին միայն յատուկ զէնքերով էք զինուել իմ դէմ, որ ինձ մնում է միայն ուսերը վեր քաշել և՝ լակոնական կարճ ոճով պատասխանել գաղիական այս դարձուածով. «Asotte question par de pérons որովհետև ձեր այն երկու, եթէ կարելի է ասել, յօդուածները իմ տուած հարցերի հետ բոլորովին կապ չունեն. դրանք մահուան ճգնաժամի մէջ գտնուող մարդու յուսահատական ունայն ճիգեր են... հետևաբար ես պատասխանում եմ ձեր երկրորդ յօդուածի գլխաւոր կէտերին: Մարդ որքան ապուշ և յիմար պէտք է լինի, որ չը կարողանայ ըմբռնել այն ամենատարրական իրողութիւնը, որ ոչ թէ Նաղարբէկն է ստեղծել հայկական խնդիրը, այլ ընդհակառակը, հայկական խնդիրն է ստեղծել Նաղարբէկին: Եւ դա այն հիման վրայ, որ ժողովուրդն է ծնում անհատներ, որոնք և բնականաբար լինում են նրա ձգտումների արտայայտիչը, և ոչ թէ անհատն է ծնում ժողովուրդը: Իսկ թէ նա

տեսէք հայն ինչ վիճակում է այս օր, թէ հայն ինչ կեանք ունի, և թէ հայի այս օրուայ կեանքի պայմանները որոնք են։ Բաւական էր փողոցների գլուխներում նստելը, պատերն էլ հիմա ծիծաղում են ձեր մեռելային դրութեան վրայ. թողէք այդ բամբասանքները, ելէք ոտքի, մի գործի ճանապարհ բռնէք որ թէ շահ ունենայ ձեզ համար և թէ ընդհանուր հայութեան։

Եւ դուք ինգլիզեվար խօսայողներ, բաւական էր ինչքան ինգլիզեվար խօսեցիք. այդ լեզուն հիմա լաւ էք խօսում, մի քիչ էլ աշխատէք հայերէն խօսելը սովորել, ամօթ է մի հայի համար իր հայրենի լեզուն խօսել չկարողանայ։

Բաւական էր այդ ինգլիզի գտակ դընելը, ինգլիզներին էլ խայտառակեցիք, ինգլիզի գտակով մարդ չէք դառնալ։

Գլաղստոնի գտակ դնողը Գլատստոն չի դառնալ, դուք ձեր խելքը փոխէք. գտակներդ փոխելով բան չի դուրս գալ։

ԴԱՐՁԵԱԼ ԿՂԵՐԸ

—

Թավրիզում մարտ 20-ին տեղի ունեցած դէպքի պատճառով Սարրաջեան կոչուած սատր արարածի բռնած մի դիրքը, առիթ է տալիս մեզ կրկին անդամ հրապարակաւ մի քանի խօսք ասել մեր կղերական կոչուած սպանիչ դասակարգի մասին։

Հայ ժողովուրդ ազգութիւնը այն ժա, մանակ է քայքայւում, կործանւում երբ նա չի ունենում ինքնաճանաչութիւն, երբ նա խոյս է տալիս իրականութեան առջևից, երբ կրկնում ենք, ամենապարզ իրականութեան առջև փակում է իր աչքերը իբր թէ ոչինչ չի տեսնում, իր ականջները իբր թէ ոչինչ չի լսում։ Այո՛ կրկնում ենք, մի ազգ որ չունի ինքնաճանաչութեան գաղափար, չունի զգացմունք, ձգտումն դէպի բարձրութիւն այն ազգը միշտ թշուառութեան մէջ կմնայ։ Դարերի դառն փորձառութիւնները, իրական փաստերը ապացոյց են մեզ որ այդ կղեր կոչուած դասը միշտ դեռ

բանի նման դէմ է կանգնել հայութեան առաջադիմութեան, նրա զարգացման ու կուլտուրական ձգտմանը. դա մի անուրանալի իրականութիւն է, որին վկայ է ամէն մի խելքը գլխին հայ։ Դարերից է վեր, հայ ազգը իր գեկը յանձնած է այդ յիմար ինտինկտով օժտուած դասակարգին և նրանք ղեկավարում են դէպի այն տեղ ուր իրենց անմիտ կապրիզն է թելադրում, ուր որ կայ սակաւ շլացուցիչ փայլ։ Թող այդ նպատակների համար զոհւի հայութիւնը, միայն ինքը հասնի իր կայր նպատակին։ Հայ ժողովուրդ, ամենաթարմ ապացոյցներից մէկը որ այս օր քո աչքի առջևումն է, այրող ներկան է (անցեալը իր նսեմ էջերը թողել է պատմութեան մէջ)։ Հայկական հարցի ներկայ ճգնաժամում, երբ ամեն մի առողջ ուղեղի տէր հայ թողել է իր հարստութիւնը, ընտանիքը ազատութիւնը ընկել արեան և կրակի մէջ, երբ զոհել է իր անձը, նուիրել է իր ազգի գոյութեան համար, կղերականութեան պետը նստած էջմիածնայ պճնազարդ սենեակներից մէկում կոկորդիլոսի արտասունքներ է թափում, իսկ հազարաւոր հաստավիզ վարդապետներ թափուած վանքերում իւրաքանչիւրը իր մանթուկի հետ է խորհրդակցում.... սատ՞ր արարածներ։

Կղեր. ձեր մեծ վարդապետը կարող է ձեզ «Հովիւ քաջ յանձն դնէ ի վերայ ոչխարաց» ուր է այդ սրբազան պատուիրանը, ինչո՞ւ էք ամեն մէկդ մի քիւնջ մտել, ում համար էք աղօթում հայերը կոտրւում են սովամահ են լինում, զոհւեցէք ձեր հօտի համար, խաչ բարձրացրէք ձեր ազգի համար, դրանով դուք կանմահանաք, հակառակ դէպքում ձեր գոյութիւնը գրոշ չարժէ, ապագան իր սև դրոշմը կդնէ ձեր անամօթ ճակտի վրայ։ Այսօր ձեր ներկայացուցչէ մի մանթ Թաւրիզում մի բացասական գործողութիւն է գործում, որը կատարելապէս լրբութիւն է, անբարոյականութիւն է, հակառակ ձեր կոչմանը, եթէ հասկանում էք ինչ է կոչում... Թողէք թողէք անամօթներ ձեր այդ հակաժողովրդական ստոր արարքը,

թողէք այդ հեռացէք, ոտ եղէք մեր գլխից, թողէք որ մենք մեր ցաւը լանք։ Կղեր, բնականաբար պիտի գրգռուէք մեր դէմ որ յանդգնում ենք ձեր խորհրդաւոր հաշիւների մէջ մտնել, ձեր սրբազան անդորրութիւնը կրդովենք, բայց որքան կուզէք կռկռացէք այս տարի ձմեռը սաստիկ էր, սառուց շատ կայ բաժակը լեցուել է, մի ցնցում ևս և ահա կը թափուի, ձեր դարն անցաւ. հերիք էորքան հոշոտեցիք մեզ հերիք է որքան մեր արիւնը ծծեցիք բաւական է որքան կուրօրէն հետևեցինք ձեզ, մի քայլ ևս և ահա անդունդ պիտի գլորուէինք, բայց այժմ աչքերս բացւել է, այլ ևս չենք կարող անել այն ինչ որ կամենում ենք... ցկրկին տեսութիւն։

Հայ երիտասարդներ, հայութեան գոյութիւնը մեզնից է կախուած չհաշտւենք ելբէք այդ փթած տարրի հետ, ջախջախենք նրանց դիւային գանգերը, ականջ չդնէք ծերերին, ոնոտիասպաշ խեղճուկներին, դրանց հետ միայն գերեզմանն է կարող հաշտուել, ձեռք ձեռքի տանք յանուն հայ ազգի բարօրութեան, յանուն ճնշուած եղբայրների և բռնաբարուած քոյրերի լառաջ խիզախենք, Ս. դրոշը բռնած, ամօթանք չբաշենք մեր ապագայ տերունդի առջև։

Խուրշիդ

ԼՈՒՄՆԱՀԱՅ

(Ամերիկա 97 թ. 20 փետր. № 58-ի առթիւ)

—

Հայրիկ ինչու մեր Բոգարը
Միշտ հաչում լուսնի վրան
Մթթէ պայծառ լուսնակը
Մէկ վնաս է տալիս նրան։
Ոչ, որդեակ իմ, ոչ թէ վնաս,
Այլ լոյս, միայն լոյս է տալիս.
Իսկ շանն՝ իբրև գայլի ցեղի՝,
Լոյս գիշերը դուր չի գալիս։

Ղ. Ղազարեան

Երկար ժամանակներից ի վեր, ինչպէս բացի Մարսէյլ գտնւող միւս բոլոր հայերը, այնպէս և մենք, չենք հետաքրքրւել, թէ արդեօք գոյութիւն ունի Մ. Փորթուգալեանի թերթը, թէ ոչ, ի նկատի ունենալով, որ նա «հող էիր տնդրէն և ի հող դարձցես» է եղել, կամ օթեակային ազէբիստական ձեռնածութիւնների մոգան վաղուց անցած լինելով, իր անպատակ գոյութիւնը պահպանելու համար զբաղւած կը լինի «մեծարգոյ տեարց» «մեծարելի տիկնանց» և «հայրենասէր նորածին մանկանց» հասցէներին ռեկլամներ տպելով. որը անշուտ Մ. Փորթուգալի օրին բազական վերջին միջոցը պիտի լինի։ Բայց որքան մեծ եղաւ զարմանքներս, երբ պատահմամբ ձեռքներս անցաւ 97 թ. փետր. 20 համարը, որի մէջ յարձակելով զանազան մարդկանց վրայ, պ. Փորթուգալը, ըստ հայրենաւանդ սովորութեան չի զլանում իր ցոփային լորձունքները ցրել այս ու այն կողմ, դէպի հասարակական գործիչ մարմինները։ Մենք կարծում էինք Արժ. Հայր Վեհունի, Սարաճեան, Այվատեան ընկերութեան «Մարսէյլի հիւրանոցի հայլն» ընդհանուր կառավարիչ, օթեակների դրամներով «բիրժի» անդամ, նախկին քիրծէ ներկայ Բոգարը, իր երկարամեայ (գործունէութեամբ) և բազմամեայ փորձերով վաղուց համոզւած կը լինի, որ իր ատամների արձնաքարը խարտոցւած լինելով ոչ միայն չի կարող խածնել զանազան գործիչներին, այլ և փոխարէն այդ ոխակալութեան կարժանանայ մի զագանակի հարւածի և այնուհետև իր անախորժ կաղկանձիւնով մեծ անախորժութիւն կը պատճառի նոյն իսկ իր դժբախտ ունկնդիրներին...։

Մարսէյլի «անուանն անարիան» թերթի № 58-ի մէջ ապւած է Մարաղայից հրատ ստորագրութեամբ մի էջեր գրւող *) յօդւած որի մէջ «ինչ ասէք կայ և ոչինչ չը կայ» էլ կրօն Աստուածաբանութիւն, էլ լեզուաբանական հնագիտութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, առևտրական հաշւակալութիւն, թղթախաղութիւն, ոստիկանական օրագրութիւն և ըստ Փարրուխի ևս ինչ գինասեմ, բարա, միայն թիլիմայարանութիւնն է պակաս այդ յօդւածի մէջ, որը պարզ բացագրութիւն կը լինէր հրանտ պսեվղօնիմի և կազացուցանէր այդ աջարսանդանական յօդւածի Մարաղայի Սարաճեանավաւեր հայոց տեսուչ ուսուցիչ, պարսից հէրիմ ջառահ, քիւրկերի

*) Թերևս Մ. Փորթուգալ այդ ամենապարունակ յօդւածի տպագրութիւնը պատճառաբանի իր նիւթ չունենալուն, մենք պատրաստ ենք մատանիչ անել նրան մի անսպառելի աղբիւր նիւթերի։ Խայոց Խայրիկը անքուն աչօք, հայրենեաց դառն աղէտներուն սրտախանձ, սրտաառոր գիշեր ու ցորեկ զբաղւած է զանազան օրբոց և այրեաց. բանից և անբանից, դրամատեարց և վաշխառուաց, քահանայից և հրեշտակերան վարդապետաց կօնդակներ գրելով, Խայրիկի եռամեայ կօնդակների տպագրութիւնը 10 տարւայ նիւթ կը մատակարարէ Ամերիային։

Յօդւածագիր

հնչակեան չեմ եղել և այժմ էլ անչափ ուրախ եմ այդ անունից զուրկ լինելուս համար), այլ իբրև ժողովրդային շահերը պաշտպանող հասարակութեան մի անդամ—մի դիրք, որ իւրաքանչիւր փոքր ի շատէ հայ ժողովրդի ցաւերին տեղեակ հայի սրբազան պարտականութիւնն է։ Եւ հէնց այդ պարտականութեան դրդմամբ է, որ ստիպւած եմ նորից պաշտպանել նոյն իսկ ձեր այդ փայփայած Նաղարբէկի տւած փաստերով.... փաստեր, որոնց առաջ դժբախտաբար թէ բարերախտաբար, պիտի լռէք թէ դուք և թէ ձեր շայկան... պ. Ղազարեան, ասացէք խնդրեմ, ովքեր էին Պոլսոյ 90 թւականի առաջին ցոյցի կազմակերպողները, ով էր Մշոյ դաշտում և Սասնոյ լեռներում առաջին անդամ ոտք դնողը, ժողովրդի հետ տարիներով դեգերւողը, Սասնոյ լեռներում հնչակ անունը հնչեցնողը և ամբողջ տաճիկ կառավարութեան կողմից հալածւողը։ Ո՞վ էր ամբողջ Սեբաստիայի և Գիւրինի կողմերը ցոյցերի կազմակերպողը, եաւարանի ամպամածուած

ռաջ հրապարակով ժողովրդի իրաւունքները պաշտպանող՝ ճառեր արտասանողը. ովքեր էին Զէյթունի ապստամբութեան կազմակերպողները և Զէյթունցիների հետ միասին կրակի ու բոցի մէջ նետւող յաղթական հերոսները, ովքեր էին 95 թւականի Պոլսոյ ցոյցի կազմակերպողները և պայթեցնողները... էլ, էլ թւել այդ արեան շարքերը, որոնց շնորհիւ եւրոպական կանաչ սեղանի վրայ դրւեցաւ Հայկական խնդիրը, իբրև օրւայ այրող հարց, և վերջապէս որոնց հասցէին էր ուղղում հնչակը մինքան բոլ բոլ գովեստները.... մինթէ այնքան ստոր և անամօթ կը գտնւէք (թէև ձեզնից սպասելի է), ձեր հետ և ձեր ընկերակից դարվիշ, տապաղչի Փարամարզը, որ ասէք թէ՝ այդ բոլորը միմիայն և միմիայն Նաղարբէկն է արել... և ինչ, մինթէ այդ անամօթութիւնը յանձն առնելով կը փակւի խնդիրը... հապա ուր տանենք 9 տարւայ հնչակները, որոնք լիքն են դրածներս հաստատող պերճախօս փաստերով. փաստեր ո-

րոնց միակ հիման վրայ հրապարակ եմ դուրս եկել։ Ուրիշ բան է, եթէ Նաղարբէկը հրապարակով յայտարարէ, որ այդ 9 տարւայ ընթացքում ինքը սխալւած է եղել այդ անձերի նկատմամբ և հնչակի մէջ նրանց մասին գրւածները խարեբայութիւններ են եղել, այդ դէպքում ես յետ կը վերցնեմ իմ խօսքը։ Իսկ ինչ վերաբերում է նրանց ունեցած դաղափարի մասին, ես չ՛եմ ուրանում, հիմնւելով հաստատ աղբիւրների վրայ, որ իմ պաշտպանած անձերը զուտ սոցիալ դեմօկրատներ չեն, ինչպէս օրինակ դուք (sic), այլ հայրենասէրներ են։ Բայց չէ՞ որ այդ հայրենասէրներ էին պատերազմի դաշտում թշնամու դէմ ժողովրդի պաշտպան զինուորները և հնչակեան դրօշը լեռների գագաթներին պարզողները. չէ՞ որ դրանք էին ամբողջ Հայկական խնդիրը զարգացնող շարժումների արիւնաթաթախ պարագլուխները։ Եւ այդ եղանակով զարգացած խնդիրն է, որ դուք, պոչը խուզած աքաղաղի պէս Արդարիի անկիւններից կոկորդ

էք պատռում, որին և արձագանք են տալիս մի խումբ անճոռնի ագռաւներ, համոզելու ձեզ պէս ողորմելիներին, որ այդ բոլորը միայն Նաղարբէկն է արել, մի զրպարտութիւն, որից ինքն Նաղարբէկն անգամ կը սոսկայ....։

Սակայն սորա հետ միասին չը կարծէք թէ սոցիալական գաղափարի դէմ որ և իցէ բան ունիմ ասելիք, ոչ, քաւ լիցի, դա իմ ուժերիցս վեր է, ինչպէս վեր է և ձեր դդումգլուխներից նրան պաշտպանելը. բայց չէ՞ որ իրականութիւնն այդ է։ Երդւօք կարող էք այն հնչակեանների անունները—բացի Բ. Զաքարեանից և Մ. Լեոնեանից որոնք սոցիալիստական գաղափարներով օժտւած մտել են երկիր և նահատակւել կամ բանդարկւել.... կարծեմ ձեր միմոսական սրախօսութեամբ անգամ չէք կարող աղտել ձեր թաթերը այդ ծուղակից, այնպէս չէ՞։

(Կը շարունակւի)

Միրզա Մելիք Սայեաղեանց

կախարդ Թիլիսմաչի Ֆալչի պ. Յովնանի, շնորհին Սողոմոն իմաստունի վեցհազարեակի ամենագէտ, ամենակարող զբչի արդիւնքն լինելը.....:

Այդ յօդուածի մէջ. պ. Փորթուգալի արժանահաւատ թղթակից պ. Հրատը զանազան ցանցառաքանութիւններից յետոյ յարձակւում է Մարաղայի բողոքականաց ուսուցչի (Միրզա Մելիք Սայադեանի) վրայ, և երևի իր յօդուածը Փորթուգալին աւելի հաճելի գարձնելու դամար Մ. Սայեադեանցը կամենում է Հնչ. ներկայացնել: Պրն. Թղթակիցը եթէ մտքի այնքան կարողութիւն ունենար, որ Հնչ. անուան հետ կիանար նրա ինչ լինելը երբէք յուսկութիւն չէր ունենալ հաւատալու թէ Մ. Սայեադեանը երբէք չի կարող Հնչ լինել: Ինչով են մեղաւոր Հ...ները եթէ Սայեադեանը օգտուելով տեղացիների միամտութիւնից իրեն վարագուրելու համար Հնչ...եան դիմակ կը դնի իր երեսին և այդպիսով կը յաջողի մի թաար ներկայացումով 35 թուման կորդել խեղճ մարաղայեցիներից և այդ գումարով իր և իր նմանների փորը լցնել, մինչև Մըսարը Գիլսոնների սեղանի փշրանքների հասնելը: Ինչու պ. Հրատը, եթէ ճանաչում է այդ Մ. Սայեադեանին, չը պիտի լսած լինի և գիտենայ դրա այն նոր միջոցը որով միամիտ ժողովրդին խաբելու, հարստահարելու, կեղեքելու ժամանակ Հնչ...եան է ներկայում, միևնոյն ժամանակ կեղծ ստորագրութիւններով նոյն Հնչ...ներին հայհոյում: Մթթէ Հ...ների պարտականութիւնն է ազգային այնպիսի ծանր մի ճգնաժամում զբաղուել զանազան Մ. Սայեադեաններով: Հնչ...ների դերը բոլորովին ուրիշ, իսկ այդ ժողովրդի իրեն պարտականութիւնն է: Ահա մի գեղեցիկ օրինակ, որը չը գիտենը ինչպէս տպագրուած է նոյն Արմենիա փետր. 13 № 36-ի Պրալայից գրուած Թղթակցութեան մէջ: Ալֆարիական խաչագողական խմբի անդամներից մէկը Աղասի Նարեկեան. որի Արփիարական լինելը պաշտօնապէս իսկ յայտարարուած է, գնում է Ռումանիա և յանուն Հնչ...ների սկսում դրամ հաւաքել: Ժողովուրդը պահանջում է նրանից իր Հ...եան լինելը ապացուցող մի գօկումէնտ և երբ տեսնում են նա մի խարեայ է, յարձակւում են վերան մի լաւ ծեծ տալիս և երկար ժամանակ հիւանդանոցում դարմանելուց յետոյ ճանապարհ ձգում... կարդացէք պ. Հրանտ, խոշորացոյց ակնոցներով կարդացէք ձեր սիրելի թերթում գրած այդ թղթակցութիւնը և համոզուցէք, որ իրեն ժողովրդի պարտականութիւնն է այդպիսի դիմակաւոր պարազիտներին, զառնազգեստ գայլերին, մի պատառ հացի համար դաւանանքը ծախող, ժողովրդի մէջ կրօնական երկպառակութիւն սերմողներին իր միջից դուրս վռնդելու քաջութիւնն ունենալ: Այդպիսիները, պ. Հրանտ, ոչ միայն Հնչ...ներ չեն այլ ձեր դիւրահաւան աչքերում թող փչողներն.....:

Իսկ ինչ վերաբերում է Մ. Փորթուգալեանի իր ստորագրութեամբ ծանօթութիւն, որ դրել է այդ թաթակցութեան տակը և որով կամենում է եզրակացնել թէ Հնչ...եանները ամեն տեղ ինչ որ մի առնչութիւն ունին, մի կապ ունին բողոքական քարոզիչների հետ, երևի այդ էլ Մ. Փ-ի նեխած ուղեղի մի արտադրութիւնն է, որով ինքն էլ աշխատում է համոզել Հայկական հարցի ոխերիմ թշնամիների այն ինքնահնար ֆանտազեաներին թէ հայկական շարժումների դրդիչը անգլիացիներն են: Մ. Փորթուգալեանին համոզելուց դատ, թէ նրա ատամներ այլ ևս անընդունակ են խածնելու, կը պատասխանենք բանաստեղծի հետևեալ խօսքերով:

Բայց լուսինը խաւ չը գիտէ,
Որ իր վրայ հաչողներ կան.
Նա լուռ ու մունջ բակ բոլորած,
Շարունակում է իր ճանբան:

Լ.

ՆԱՄԱԿ ՖԱՐՈՒԽԻՆ

—

Փելիեսոնչի !

Կիրիրիս քի ձէնդ չը լելի. տօ, էլ իշ ձէնս ըլի, խերիք չելաւ, էն կիրելա քի մենք կիրինք, էն զարպաքի մենք էկանք քար ըլէր մկա խալվիրէր:

«Իմացողին մին, չիմացողին հազար», աննիանա բիր կըլտան (հասկացողին մի մազից), էլ, ախպէր, մեզի էշլն իշ պարք ունինք:

Աղէկի զին'դիդ էլ, ասելիս այսմա դայնի վեր'ի ելի, ախը թամամ տեղն 'ի եիս էլ ասիմ՝ արա կարըշըսկ, մասսը իթիպ, հար քեաս օգ վալին դա դի: Տօ մարդ, վամ վավին 'ի, վամի քեզի խապար առնելի, ըսկի ինալին դիւն աշխան'քեա կաս՝ փէդ ունիս դիւս եար մէյդան, փէդ չունիս, կլոխդ քեաշի նիս, մի զուրցա, եօխսա չէ, քեու արիվա վկայ'ի, բերանիդ'իս բացի քեանց լէշխոր ջանաւար տի-տիյ, տի-տիյ (պատառ պատառ) կանեն քեզի: Խոշթապթոն 'ի:

Հա, էն օրքերն էլ տրսնելիս մէ բարեկամս ընձի էդէնցի ասելի. «խերիք 'ի բալամ, ձեռ քեաշի էդ կազէթ-մազէթէն կազէթա քեզի խաց տւող չի, խացիդ քար մի թալ (հալա անկեաջ դի), դիւն զիրինդ եիլ քեզի խմա, քիթայդ կլոխդ պինդ պախի, քի քամին չը տանի. քեզի ինչ Յունանը ջինդարազ'ի, մարդու բուզին չասնելի, քեասիպքեարթուն'ի դա, ինչ մեղք'ի, քելի դիւն էլ արա, քեզի խմա փէդ դատի մէ օր լացի, բէյնավա, եօխսա սանս նա Կիրակոսա կեօղ'ի, ազգի փէղն'ի ուտելի, կենաս ձերէդ կկեայ, դիւն էլ կի՛, չես նալի մկա այսմը տեղովն'ի շուռ կեալի. եօխսա չէ, բալամ, գիւդ զուրցացողի քիթայա մկա ծակ'ի, խացէյ'ին կռելի մարթու, խազդար ասա, վամի քեզի լսողա....»:

Դիւզը, խոստրվանք ըլի քեզի, էդ խօսքերա բէյնս մտան: Ախը հախկ էլ ունիմ, տես քիեօլ հախկ ունիմ, եա չէ:

Դիւն ըլիս՝ իշ կանես, ասա, խապա ր'եմ առնելի քեզմէն: Յունանը ձեռ իրա թաշախուսսին տիրերի ջէսլը (հէր իդդահ'ի չի ծախի, բալամ, ինձի, քեզի լման չի խօ, ազգի մ՝ֆթա փէղն'ի ուտելի, մարսելի, ջադուէն էլ տալէն էրկու իրեք խարիր թիւման դատեամ ունի, հէր կուտիրմ'ըշ չըլի), կոռ, չոր վեզն էլ դիւզ ղաւաղի փետի լման բանցրցուցելի վեր (զահրմար վեզն էլ էնկթա կարճ'ի ծուռ ու մուր'ի ուրախրեն-թապեհ չըլելի) դա նա (այստեղ այնտեղ) հար վարդի ըլե՛ի նստելի էդ խօսկն'ը, «կնիկ էլ կթփեմ, կլոխ էլ կճղեմ, մարթ էլ կսպանեմ, հար շէյ, հար օյին բազութէն ասէք կխանեմ, ամմա աղէկ իմացէք, էլա վարժապետ եմ քի կամ, ձեր աջղի (եանի մեր աջղի հա) ինչուն մեռնելս Մարաղայի վարժապետն'եմ:

Նէնան էլ էթալի սանդուղ թուլասիի (փոքրիկ որսի շան) պէս օր ուկիլիր ազանների վէտների տայն'ի քիս քիսվելի, սողալի պէս խաղացնելէն, հա վանկեալտամիշ'ի ըլելի, ասման դի, ադա, եիս ձեր կուլն'եմ, խեղճ'եմ, եէթիմ եէխսիրի տեր'եմ աման, եիս ձեր... հար իշ քի հրամայեք հազիր'եմ...»:

Աղան էլ հէնց ընցա մարդ'ի ուզելի, նար խալջին էտէնց մարդ կկեայ, վերցելի տես ինչ'ի ասելի, «քելի, կեադա, Յունան, քեանի քի իմ ջանա սաղ'ի քեզի դարդ ու բալա չլայ, մի վեախեցի, Մարաղան տեղով մեր թայփան'ի, Աստու դովլաթէն տովլամանդ էլ'ենք, իշ կենան տնել. թօ հա խաչեն, վամի անկեաջ դինողա, քեարվանա ուրսնի, շունա կխաչի»:

Ի՞նչի դեար չարան (ճար), մկա դիւն ասա: Կիրելով, զուրցալով էլ քի մէ զատ չըլլելի, իշ թար քի չելաւ էլ: Իշ ղդա զուրցացինք խերիք էր, մկա էլ բեան տրսնելու կեախն'ի:

Ախը Եւրոպան ըտէնց չոր ցամաք զուրցալով չէր, որ քիւլի քեցաւ խալերուա կլօխը: Այ միթինկ Մանչեսթերում, միթինկ Զեսթեր Հօլում, այ չեմնալի ճառախսութէն (բացի զրոնաչութէն) որ չհանդամում. ինչ, ինչ, իրեք տարի հա զուրցալ, հա կիրել, հարալդադ, քեաս-թուա, հարպ-զօրպ, ախբրը դես էկաւ հէչ զադ, փուչտան-փուչ... խողը մաղաւ մեր կլոխա, խարիր խազար խալ կոտորաւ էն ջինդաբազ-եանի (ասելիս էն մեր Յունանէն մնաց) Սօլզտուին'ի, ինչ զահրումար'ի, էլը չամչցաւ, թազդան միթինկ, թազդան ժողով, կենա կիրել, կենա զուրցալ, էլը քեօհնա երք... վայ ձեր զանիմը սուլթան Համիդն ըլի հէյ, իշխօ ելիրի:

Մկա, ախպէր, իմ խօսքն էդ'ի, հար զատ ուր վախան ունի, կիրել, զուրցալ, ուտել խմել, քլնել... հար, հար զատ իր կեախն ունի, մկա բեան դրռօլու վախտին, զուրցելու կեախն գրռընցաւ կնաց մեռաւ ադար բեան նողիս բիսմիլլահ, մէյտան, եօխսա չէ, զուրցալէն ֆայդա չկայ,

Հա, միաս ինկեաւ, չեմ նալի ինչ մեղք'եմ արի կիրիրեմ կազէթա քի Ֆլանքեասա կեօղ'ի ազգի փէղն'ի կերի, մկա էլ պրծում չունիմ, դաջլանիրա, թուլաներա էլ տեանկ արինս, կլոխս տարան թամամ. կ՝ըռ, կ՝ըռ, կ՝ըռ, հավ, հավ, հավ... ըմմէնին բօլլամա թանկ թանկ ֆէշքեաշներ բաժներ, իսկի դեանց միտ չես քիցելի: Էտ խեատին օղորմի մերելքերիդ, մէ զատ էլ քիցի դեանց բերանա, թօ ձեր քեաշին ինձմէն. ախը չեմ նալի ինչ'ենն ուզելի, ինչ փրրացաւ ունենն: Դիւն չիս լսի բաս խանըմ բաջի Պալունու բեանը բուրդ'ի: Համշարինները կոտրաւան լացելէն, արտասուելէն, բամփաչայով կլխներին են չուփելի, վայ ամանը անդունդ'ի կենացի խասի, ասելին բէյնավան, Ֆարրուխ. լափ պառաւեր'ի, զադիմ սուֆթա էլ չի մնացի, թամամ մէ դեղնած զափարան'ի դարձի, դամար-մամար խաստ չանի լման դիւս 'ի էկի, բեանէն էլ ինկիր'ի երսին ըրշկացողի զվզվանքն'ի կեալի. ասելին ընցծ օր'ի ինկի, դուշմանդ, քեաֆիրը էն օրի չելի: Սարաճ պապան էլ չի նեար բաղդէն շնորք'ի տանելի, էս խետ բեչտրան իրխէյ լափ ինելու'ի: Ախը մեր մէջն'ի Ֆարրուխ, խոքըն ըլի, իր մեղքն'ի վամ էր ասելի նեարան ձեռա էն կթա տափա դինէր, այ էնենց կանի, էտէնց օրի էլ կխասնի: Աչքդ էլ լեօս, բաս չասես թթուած Փորթուգալի եթիմ-եխսիրքերը թարվեզ մէ ճոչ բեանի վերայ'են: Ամմա բեարաքեալլա քեօսի լաճ Ս. Յ-ին, եր թիմը ֆիրսանդը աղէկի կիցի, բաղդաւորը համ Փորթուգալի նայիպն'ի դեարձի (փախիլլանմիշ ըլողի, նախանձողի, զուզողի աչքը դիւս), համ էլ «խօրօտ խօրօտ» տղներ'ի կառթացուցելի...:

Դիւն զահմաթ քեաշի մէ զատ արա, կիրի Արդաբիլ էն դարվիշ Ֆ-ին, թօ քեաշկեուլն ու մորթին վերցի կեայ Սալմաստ, Արդաբիլէն նարան խէյր չի կեայ, նաշայի, քէֆի տեղ'ի ուզելի Սալմաստ'ի:

Կեալ շեաբթի Աստծով կկիրիմ մեր քաղքը հալ ահվալաթէն: Մկա հալա մնաս բեարով:

Շիրազլի

ՆԱՄԱԿ ՍԱՐԶՈՒԱՐԻՑ

—

18 ապրիլ 97

Խորասանի նահանգում Սաբզուար քաղաքն, Մէշէտից յետոյ երկրորդն կարելի է համարել, որն ծաղկած է բաւականին մեծ վաճառականութեամբ, տեղումս կան 15-ի չափ հայ վաճառականաց գրասենեակներ որոնք ըստ մեծի մասին պարապվում են բուրդ-բամբակի, շաքարի և զանազան տեսակ մթերքեղենների առուծախսով:

Տեղիցս տարեկան դուրս է գալիս մօտաւորապէս 15 հազար հակ բամբակ և հազար հակ բուրդ, և ընդհանրապէս այդ բոլորի առևտուրն հայերի ձեռքումն է որոնք, իւրաքանչիւրն ունենալով մի քանի կոմիսիոներներ, կարողանում են իւրեանց ուզեցած ապրանքն ձեռք բերել:

Եւ այստեղ էլ ըստ հայի նախնական սովորութեան, միմիանց հակառակութեամբ, միմեանց յետ վատ վարուղութեամբ, միշտ սկսում են միմիանց վնասել և պարսիկներն հանգամանքից օգտուելով ընդհանրապէս օգուտն մեծ մասամբ պարսիկներն են տանում, մինչ, դեռ այնպիսի մի տեղում ուր կարելի է համերաշխութեամբ գործել և այն օգուտն որ իզուր պարսիկն է տանում իրանց թողնեն: Բայց ում ես ասում, միթէ կարելի է հայի մէջ միաբանութիւն հաստատել, որքան այդ թշուառութեան համար խեղճ «Շաւիղն» բղաւեց, բայց որի համար միշտ այդ ձայնն մնում է ձայն բառբառոյ յանապատի:

Չեմ կարող ասել որ «Շաւիղն» չ'կարողացաւ պարսկահայոց ուղղել, ոչ մինակ «Շաւիղն» էր, որ լինելով պարսկահայի վիճակին ծանօթ մէկն կարողացաւ բոլորի պակասներն եւ կեղտերն բացարձակ երես խփել. և այսպէսութեամբ շատերն ուղղուեցին, բայց էլի դեռ մեր աստի եղբորց համար նշանակութիւն չունի թողնենք այդ:

Պարսկաստանի բոլոր քաղաքներից այս տարի յօգուտ թշուառ ողվելոց, հանգանակութիւն բաց արին, որոնք հրատարակուեցին «Շաւիղի» և «Մշակի» մէջ. բայց մեր տեղոյս հայերի սիրտն

կարծրացած է որպէս քար չէ ուզում իր եղբորց օրինակին հետևելով մի քանի ղռանով օգնել նրանց։

Միթէ բաւ չէ որքան կոտորուեցին անգութ տաճկի սրից այն թշուառն կարողացաւ փախչելով ազատուել, հիմայ էլ պէտք է քաղծից մեռնէ որ մի կտոր հաց է աղաղակում, որի միակ յոյսն քեզ վրայ է, հայ եղբայր, որի թշուառ վիճակին միայն կարող է բարւոքել քո օգնած կոպէկներով։

Ամբողջ Հայաստանն արեան մէջ է լողում, շնորհիւ արիւնարբու սուլթանի որն ուխտած է հայ անունն իսպառ ջնջել, որից հազարաւոր ընտանիքներ են ամբոխացած, հազարաւոր որբեր թշուառ ու անտէր թափառում են աշխարհից-աշխարհ, մի կտոր հաց և օգնութիւն՝ աղաղակելով։ Արձագանքն Եւրոպայ հասաւ, իւրաքանչիւր մի խղճի տէր աճապարեց ըստ իւր կարեաց օգնութեան հասնել այդ թշուառ սովատանջներին. իսկ մեր հայ եղբայրն բոլորովին անտարբեր զլանում է մի քանի ղռան տալ յօգուտ գաղթականների. հազարներով ծախսում է բոպէական զուարճութեան համար որ գրելն անգամ ամօթ եմ համարում, և եթէ մի անգամ պատահում է որ և է պանդուխտ գաղթական կամ որ և է մի թշուառ որբ, դեռ բացի օգնելուց, խեղճին խաչագող անուանելով են հեռացնում, և թշուառն չգտնելով ոչ մի տեղից օգնութիւն, աւելի բարւոք է համարում մեռնել, և ոչ թէ ստրկութեամբ ապրել։

Նայեցէք Յոյն հարուստին, որպէս բաց է արած, կամաւորների օգնութեան իւր ամբողջ հարստութիւնն, որպէս պատրաստ է ամենայն զոհողութիւն անելու, իսկ այն, որ չէ կարողանում նիւթական օգնել, ազատ կամքով կամաւոր է գրվում. վերջապէս նայեցէք իւրաքանչիւր Յոյնի վրայ թէ ինչպէս բոլորն ցանկանում են ծառայած լինել իւրեանց տառապող եղբորցն ու հայրենեաց «այո՛ նայենք և օրինակ առնենք»

Շահէն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պաշտօնապէս որոշուած է Վեհափառ Շահի Եւրոպայ ճանապարհորդութիւնը. և ինչպէս լսում ենք, Ն. Վ. իր հետ պէտք է մի հայ պաշտօնեայ վերցնի իբրև թարգման։

—

Ինչպէս լսում ենք շուտով պէտք է, Յովհաննէս խան Մասէհեանցը, ճանապարհ ընկնի դէպի Լոնդոն թագուհու յօբելեանին ներկայ գտնուելու, պարսից կառավարութեան կողմից։

—

Անցեալ կիրակի հանգուցեալ Շահի տարեդարձի առթիւ հայոց եկեղեցում կատարուելիք հոգեհանգիստը յետաձգուեց եկեղեցու նորոգութիւնը չը վերջանալու պատճառով։

—

Անցեալ շաբաթուայ փոխանորդարանում պատահած տուր ու դփոցի մասին մեր գրած լուրի առթիւ ստացել ենք մի շատ հետաքրքիր մանրամասնութիւն, բայց դժբաղտաբար չենք կարող տպագրել քանի որ յօդուածը ստորագրութիւն չունի։

—

Ինչպէս մեզ հաղորդում են խաչագող հոսոսների խաչագողիկ աշակերտները, նախանձելով Ալֆարական դափ՝ի ներին, որ ստացան նոքա մի չը տեսնուած ճարպիկութեան համար—էշ ներկելու փոխարէն գրականութիւնը կեղծելով, և հետևելով իրենց ուսուցիչներին, սկսել են կեղծել «Կռիւ» անունով թերթը, որը մի ժամանակ հրատարակւում էր։ Զգուշացնում են հայ ընթերցող հասարակութեան այդ նորաձև խաչագողութիւնից։ «Կռիւը» չէր կարող հրատարակւել, որովհետև կուականները պաշտօնապէս երեք տարի առաջ միանալով մի յայտնի կուսակցութեան հետ, ընդ միշտ դադարեցրին այդ թերթը, և այդ կեղծ «Կռիւը» հրատարակւում է մի երկու խաչագողների ձեռքով, որոնք դուրս են վռնտուած այս ու այն կուսակցութիւններից։

—

Խմբագրութեան տրամադրութեան տակ թողած Արամեան ընկերութեան 3 օրինակ Շաւիղից մէկը ուղարկում ենք Քազազի քահանային գիւղացիների մէջ կարդալու պայմանով իսկ երկուսը Զարմահալ։

—

Ռաշտից պ. Առաքել Մարգարեանը մի օրինակ Շաւիղ նուիրեց վերին Ագուլիսի հայոց դպրոցին։

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՐԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Լոնդոն 1. մայիս (ն. տ.) Տաճիկները յարձակուեցին Փարսալայի երկաթուղու վրայ։

Ցաւալի մի դէպք պատահեցաւ Աթէնքում անցեալ օր, երբ Կոմսուհի Սպարտան հիւանդանոցն այցելելուց յետոյ ոտքով վերադառնում էր։ Ցանկուզն ու լիրբ խուժանը այնքան այպանեց Կոմսուհուն որ, նա պարտաւորուեց յետ դառնալ և ազատանուել հիւանդանոցում, ուրտեղից նա կառքով արագութեամբ դիմեց դէպի պալատը։ Մեծ իրարանցում նաև տեղի է ունեցել Աթէնքի եկեղեցիներում արքունական աղօթքի ժամանակ։

Լոնդոն 2. Սալիզբրին առաջարկեց որ մի կոնֆերանսիայ կազմուի Փարիզում տաճկա-յունական պատերազմի առթիւ. պետութիւններից մի քանին այս առաջարկութեան ընդունելութիւնը կասկածելի են համարում։

Յունաց զօրքը Եպիրոսից յետ դարձաւ դէպի Արթա։

Յունական աղբիւրներից լսում ենք որ Սմօլենսկիոյ բրիգէտը վերջնականապէս յետ մղեց 8000 տաճիկներ Վելիոտիօնում, և մեծ վնասներ տուեց նրանց։ Եղեմ Փաշան, ինչ և է այս մասին հեռագրում է որ, իբր թէ տաճիկներն կուից յետոյ յաղթական հանդիսացան և թէ յոյները յետ դարձան Վօլո։

Անցեալ օր Բալլին յունաց ժողովում ասաց որ, առաջին հոգը զօրքին վերակազմելն, է, և թէ հակառակ դէպքում անհնար կը լինի պատերազմ շարունակել կամ խաղաղութիւն ձգել։

Լուր կայ որ Քօլօնէլ Վասսոը յետ է կոչուել Կրէտայից։

Լոնդոն 2. Համաձայն այն դաշնի, որ Ցարի և Ֆրանսիս Ժոսէֆ Կայսեր մէջ փակուեց (վերջինի Փետրբուրգ այցելելու ժամանակ), Աւստրիան և Ռուսիան յայտագիր են ուղարկել Սերբիային, Բուլգարիային և Մօնտէնիգրոին, որով յայտնում եմ իրենց հաւանութիւնը, նրանց (վերջիններին) բռնած դիրքի մասին, բայց մի խօսքով, յայտագրերի նպատակն է եղել զգուշացնել վերջիններին մնալ հանդարտ։

Լոնդոն 3. Սալզբրիի կոնֆերանցիան կազմելու առաջարկը, պետութիւնները մերժեցին։

Յունաց զօրքը կրկին մտաւ Եպիրոս և նորից դիրք կազմեց Ֆիլիպիդայում։

Լոնդոն 3. Արտաքին ադմիրալները, այս առաւօտ, հանդիպելով կրէտական ապստամբների պարագլուխներին, բացատրեցին նրանց, Կրէտայում կարգադրութիւք ինքնավարութեան մասին։ Պարագլուխները, ինչ և է, խորշեցին նրանց լսելուց և պնդեցին թէ Կրէտան պիտի միանայ Յունաստանին։

Լոնդոն 4. 200 Ֆրանսական զինուորներ մտան Վօլո, ուրտեղի փողոցներում նրանք պահպանների դիրք են բռնել։

Տպաւորութեան տակ ենք որ պետութիւնները պիտի միջամտեն Յունաց և Տաճկաց մէջ։

Յունաց պատերազմական բարձր պաշտօնեաները (ի միջի որոնց Քօլօնէլ Վասսոը)՝ յետ են կոչուել Կրետայից, այն պատճառով, որ նրանք Թեսալիայի դիրքը ամրապնդեն։ Այս լինում է իբրև նշան խոնարհութեան պետութիւններին՝ յունաց կողմից։

Յունաց պատերազմական նաւաբարը որ գնացել էր Փարսալայ, այնտեղի զօրքի վիճակը քննելու, յուսադրական հաղորդութիւններ է անում այնտեղի և Վելիստինոյի զօրքի դրութեան մասին։

Կասկած չկայ որ Յոյները վերջնականապէս յետ մղեցին տաճիկներին Վելիստինոյից, և սկսեցին զօրաց վերաքննութիւնը որի հետևանքն եղաւ մի սաստիկ կանոնաւոր պատերազմ։

Յոյները մեծ արիութեամբ կուեցին բայց տաճիկները, դարձեալ թարմ ոյժեր են ուղարկում Վելիստինօ, այն եռանդով որ թէ Վելիստինօն շուտով պիտի նուաճուի։

Լոնդոն 6. Վելեստինոյում, յոյները նորից յետ մղեցին տաճիկներին։

Լուր կայ որ Փարսալայի դաշտի վրայ պատերազմ է սկսուել։

Լոնդոն 6. Ամբողջ Փարիզը, սգի մէջ է, նա ողբում է իր ահագին կորուստը որին պատճառ եղաւ, սոսկալի հրդեհը։ Աւստրիայի Կայսրուհին, իր քոյր Կոմսուհի Ալէնկօնի հրդեհով մեռնելու համար ի սուգ պառկած է։

Անցեալ օր, Փարսալայում և Վելիստինոյում, մի քանի կռիւներ եղաւ, բայց յոյները ամեն անգամն էլ քաջութեամբ դիմադրեցին տաճիկների զօրագոյն ոյժերի կրկնակի յարձակմանը, Երկու կողմն էլ մեծ կորուստներ ունեցան։ Արքայական իշխանները, Փարսալայում իրենց զօրքին առաջնորդելով նրանց բաւական հոգևորում էին։

Աթէնք 6. Թագաժառանգի զօրախումբը անցեալ երեկոյ, կատարեալ կարգով վերադարձաւ Դոմօկո, որը ընկած է Փարսալայի հարաւ-արևմտեան կողմը, ուր յիշեալ զօրախումբը ամեն պատրաստութեամբ սպասում է տաճիկների յարձակմանը։ Յոյները Փարսալայից հեռացան Քօլօնէլ Սմօլենսկիի զօրքը հեռացաւ Վելեստինոյից, և կարելի է, վերադառնայ Վօլո կամ Ալմիրօ։ Պետութիւնները սկսել են միջամտել, (միջնորդել)։

Լոնդոն 7. Յոյների վերադարձը Փարսալայի հետևանք է լինում տաճիկների յաղթութեանը։ Տաճիկները դիրք բռնեցին Փարսալայում։

Յոյները Փարսալայից գնացին այն պատճառով որ հեռանան իրենց ետևից գացող բազմազօր տաճկական զօրքից։ Յոյները անցան դաշտի և գետի վրայով, բայց միևնոյն ժամանակ նրանք մեծ վնաս կրեցին տաճիկների արտիլերուց։ Սմօլենսկին յետ է դառնում դէպի Ալմիրօ, այն նպատակաւ, որ նա միանայ Կոմս Սպարտայի զօրքի հետ, և հիմա թողնում է Վօլօն բոլորովին անպաշտպան։

Լոնդոն 8. Յոյները Փարսալայից հեռանալիս թողեցին այնտեղ բաւական քանակութեամբ ռազմամթերք։

Լոնդոն 8. Աթէնքում, պատերազմ անելու զգացումը պակսել է, և հակադինաստիկ (dynastic) շարժումները դադրել են։

Պետութիւնները, կատարելապէս պատրաստ են միջնորդելու. բայց դեռ սպասում են Յունաստանի խնդրանացը։

Վիլիամ Կայրը, չի յօժարում միջամտել, մինչև որ Կրէտէն չը դադարկւի բայց համախոհ է միւս պետութիւններին։

Յունաստանը վճռել յետ կոչել 25 օֆիցերներ, և 2 Սապպերների (Sapper) ընկերութիւն Կրէտէից։

—

Մի հեռագիր ուսանողներից։ Աթէնք 16 ապրիլի, ուսանողների ընկերութիւնը ստացաւ Հէյդելբերգից։ «Եւրոպայի հայ ուսանողները միացած Հէյդելբերգում, յայտնում են դրանց խորին համակրութիւնը, այն առթիւ որին դուք յոյներդ հետևում էք, ԿԵՑՑԷ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ»

Արտօնատէր հրատարակիչ՝
ԸՆԴՐԷՍՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆ